

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Օրգանական և
դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական
կենտրոնի տնօրեն
Ս.Գասպարյան
«30» հոկտեմբերի 2025թ



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայցորդ Քնարիկ Մկրտիչի Շամիլյանի՝ «Բալենի սովորականի պտուղների ազդեցությունը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների վրա» ԺԴ.00.14-«Դեղաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Սիրտ-անոթային հիվանդությունների (ՍԱՀ) կանխարգելման և բուժման նոր միջոցների փնտրտուքը, չնայած առկա միջոցների լայն ընտրանու, որոնք ներառում են հակաագրեգանտային, հակազերճնշումային, հակահիպերլիպիդեմիկ և այլ դեղաբանական խմբերը, շարունակում է մնալ կարևորագույն բժշկական, սոցիալական և տնտեսական խնդիր: Այն հիմնավորվում է նրանով, ՍԱՀ-ից մահացության և անաշխատունակության ցուցանիշները աշխարհում զբաղեցնում են առաջին հորիզոնականը: Ընդ որում ՍԱՀ-ով պայմանավորվորված մահերի մեծամասնության դեպքում պատճառ են հանդիսանում ուղեղային կաթվածը և սրտամկանի ինֆարկտը, որոնք ներկայումս ունեն երիտասարդացման միտում:

Հաշվի առնելով վերոնշյալը, ատենախոսն իր աշխատանքում փորձել է պարզաբանել «Բալենի սովորականի» պտուղների սիրտ-անոթային և ուղեղ-անոթային համակարգի վրա ազդող հատկությունները, դիտարկելով Բալը որպես անվտանգ և բազմակողմանի ազդող միջոցների ստեղծման աղբյուր:

Ներկայացված աշխատանքը վերաբերում է «Բալենի սովորականի» պտուղների ազդեցությանը՝ սիրտ-անոթային և ուղեղ-անոթային հիվանդությունների ռիսկի գործոն հանդիսացող ցուցանիշների վրա: Հեղինակի կողմից նման մոտեցումը հիմնավորված է, հաշվի առնելով Բալենի սովորականի պտուղների կենսաբանական ակտիվ միացությունների կազմին նման կազմով օժտված այլ բույսերի համանման հատկությունները, ինչը պարզաբանված և ներկայացված է ատենախոսության գրականական ակնարկում:

Աշխատանքի արդիականությունը: Քնարիկ Մկրտիչի Շամիլյանի՝ «Բալենի սովորականի» պտուղների ազդեցությունը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների վրա» թեմայով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացված ատենախոսական աշխատանքը

արդիական է՝ հիմք ընդունելով սիրտ-անոթային հիվանդությունների բուժման և կանխարգելման համար նոր դեղերի ստեղծման վերոնշյալ անհրաժեշտության հետ մեկտեղ, նկատի ունենալով հատկապես նաև այն փաստը, որ կորոնավիրուսային պանդեմիայից հետո նկատվում է, սիրտ-անոթային և ուղեղ-անոթային հիվանդություններից զգալի աճ՝ պայմանավորված հեմոստազի համակարգի խանգարումներով:

Բալենի սովորականի պտուղների սիրտ-անոթային և ուղեղ-անոթային հիվանդությունների ռիսկի գործոնների վրա ունեցած ազդեցությունների ուսումնասիրումը հիմնավորվում է նաև այն փաստով, որ գրականության մեջ հանդիպում են բավարար քանակով տվյալներ պտուղների հակահիպերգլիկեմիկ, հակաօքսիդանտային, հակահիպերլիպիդեմիկ և հակաբորբոքային հատկությունների մասին: Նկատի ունենալով որ, հիպերլիպիդեմիան, հիպերգլիկեմիան, մակածված օքսիդատիվ սթրեսը և էնդոթելի բորբոքային վնասումը բարձրացնում են էնդոթելիալ դիսֆունկցիայի զարգացման ռիսկը և հետևաբար սիրտ-անոթային և ուղեղ-անոթային պատահարների հաճախականությունը, որն էլ հաստատում է հեղինակի կատարած աշխատանքի բացառիկ արդիականության մասին:

Աշխատանքի նպատակը, ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների պարզաբանման աստիճանը, դրանց արժանահավատությունը:

Հեղինակն իր աշխատանքում նպատակ է դրել ուսումնասիրելու «Բալենի սովորականի» պտուղների դեղաբանական ակտիվությունը՝ գնահատելով պտուղների ազդեցությունը ՍԱՀ-րի ռիսկի գործոն հանդիսացող ցուցանիշների վրա: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հեղինակը ոչ միայն ուսումնասիրել է թարմ պտուղների վերոնշյալ ազդեցությունները, այլ նաև ստացել է տարբեր լուծամզվածքներ, ինչպես նաև մշակել է լիոֆիլ փոշու ստացման օպտիմալ տեխնոլոգիական մոտեցումը: Լուծամզվածքներում և լիոֆիլ փոշում սպեկտրաչափագրության եղանակով անտոցիանների քանակությունը որոշելուց հետո, որպես անտոցիանների առավելագույն քանակություն ունեցող դեղաձև՝ լիոֆիլ փոշու, ինչպես նաև թարմ պտուղների կիրառմամբ՝ առնետների վրա և կամավորների շրջանում ուսումնասիրել է պտուղների դեղաբանական հատկությունները:

Վերը նշվածի բացահայտումը հնարավոր է դարձել շնորհիվ, հայցորդի կողմից, նպատակին համահունչ և հստակ ձևակերպված խնդիրների լուծմանը ներառյալ՝

- Կամավորների շրջանում պտուղների հակաազդեգանտային ակտիվության գնահատում՝ հակազդող ազդեգոմետրիայի մեթոդով,
- Կամավորների շրջանում պտուղների կողմից խոլեստերինի, տրիգլիցերիդների, բարձր և ցածր խտության լիպոպրոտեինների քանակական պարունակության վրա ունեցած ազդեցության որոշում, համապատասխանաբար, ֆերմենտատիվ կոլորիմետրիկ, գլիցերոլ ֆոսֆատ օքսիդազային, ակցելերատոր ընտրողական դետերգենտային և հեղուկ ընտրողական դետերգենտային մեթոդներով,
- Կամավորների շրջանում հոմոցիստեինի քանակական պարունակության որոշման քեմիլյումինեսցենտային իմունոֆերմենտային անալիզի մեթոդով,
- Բալի լիոֆիլ փոշու ուղեղ-անոթային ակտիվության բացահայտում՝ լազեր-դոպլեր հոսքաչափության մեթոդով,

- Պատույների ազդեցությամբ առնետների զարկերակային ճնշման փոփոխությունների ազդեցության ուսումնասիրում ոչ ինվազիվ «tail-cuff» մեթոդով,
- Բալի հակաբորբոքային ակտիվության ուսումնասիրում՝ առնետների ականջի քսիլոլով մակաձված բորբոքման մոդելի կիրառմամբ,
- Բալի հակաբորբոքային ազդեցության ձևաբանական ուսումնասիրում՝ հեմատոքսիլին-էուզին ներկման մեթոդով:

Վերոնշյալ հետազոտական մեթոդների և փորձարարական մոդելների կիրառմամբ տրամաբանորեն կազմել և իրագործել է սեփական հետազոտությունները:

Հետազոտության տվյալների վիճակագրական մշակումը իրականացվել է IBM SPSS Statistics 27 և Microsoft Excel 16.88 (Microsoft 365) ծրագրերով, ինչը կասկած չի հարուցում տվյալների արժանահավատության համար:

Քնարիկ Շամիլյանը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է անհրաժեշտ քանակությամբ համաշխարհային գրականություն, կատարել դրանց համեմատական վերլուծություն: Հանգամանորեն ուսումնասիրելով ներկայումս լայն կիրառություն ունեցող հակաազդեգանտային միջոցների թերությունները: Հեղինակը կատարել է մի շարք բույսերի սիրտ-անոթային, մասնավորապես՝ հակաազդեգանտային ազդեցությունների վերլուծություն: Որպես անվտանգ և բազմակողմնակի ազդող միջոցների խոստումնալից աղբյուր, առանձնացրել հակաազդեգանտային հատկություններ ցուցաբերող մի շարք բույսեր, հատկապես վերլուծելով վերոնշյալ ազդեցություններն ապահովող կենսաբանական ակտիվ միացությունները: Այս ամենի հիման վրա, հեղինակը մանրամասն ուսումնասիրել է Բալի կենսաբանական ակտիվ միացությունների կազմը և գրականության ամբողջական վերլուծությունից հետո տրամաբանորեն անցում կատարել սեփական հետազոտությունների իրականացմանը:

Ուշադրության է արժանի աշխատանքի գրագետ և տրամաբանական շարադրումն ու ներկայացումը: Այն կազմված է ատենախոսություններին առաջադրվող պահանջներին համապատասխան, գրված է գրագետ հայերեն լեզվով: Ատենախոսության տեքստը կազմում է համակարգչային 129 էջ: Բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից (գրականության ակնարկ, հետազոտության նյութը և մեթոդները, հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը), ամփոփումից, եզրակացություններից, գրականության ցանկից, հապավումների ցանկից: Վերոնշյալ բաժիններում ներկայացվածը արտացոլում է հեղինակի խորը և հիմնավոր գիտելիքները տվյալ ասպարեզում, ինչպես նաև գիտաքննադական մտածելակերպը:

Հետազոտության արդյունքները և վերլուծված տվյալները ներկայացված են 39 նկարի և 3 աղյուսակի միջոցով: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են հեղինակի անհատական և համատեղ 7 գիտական հրապարակումներում, որոնցից 3-ը ազդեցության գործակից ունեցող պարբերականներում:

Հետազոտության գիտական նորույթը:

Աշխատանքում բացահայտված են Բալի հակաազդեգանտային և ուղեղանոթային ակտիվությունները: Ուսումնասիրվել են պտուղների լիպիդային կազմի և հոմոցիստեինի քանակական պարունակությունների վրա ունեցած ազդեցությունները: Իրագործվել է

գտուղների՝ զարկերակային ճնշման և բորբոքման վրա ունեցած ազդեցությունների դիտարկում: Հակաբորբոքային ակտիվությունը նաև հաստատվել է ձևաբանական հետազոտությամբ:

Աշխատանքի նշանակությունը գիտական և գործնական կիրառության համար: Բալենի սովորականի պտուղների հակաազդեգանտային հատկությունը հիմք է հանդիսանում առաջարկելու այն, որպես հակաազդեգանտային միջոցներ ստեղծելու աղբյուր՝ սիրտ-անոթային հիվանդությունների միջին և ցածր ռիսկի խմբի հիվանդների բուժման և կանխարգելման համար:

Բալենի սովորականի պտուղների ուղեղ-անոթային ակտիվությունը, դրա՝ զարկերակային ճնշումն իջեցնող, հակահիպերլիպիդեմիկ, հակաբորբոքային հատկությունների հետ մեկտեղ հիմնավորում է դրանից ստացված լիոֆիլ փոշու հիման վրա նոր միջոցների ստեղծումը, որի կիրառումը կնպաստի ուղեղի խափանված արյան շրջանառության հետևանքների կանխմանն ու վերացմանը:

Աշխատանքն առավել արժեքավոր է դառնում հեղինակի կողմից որոշ կենսաբանական հատկությունների հիմնավորումը պարոմոնոֆոլոգիական մեթոդներով:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Ք. Մ. Շամիլյանի կողմից իրականացված աշխատանքը, կարևորությունը և նշանակությունը, այնուհանդերձ հարկ ենք համարում ատենախոսի ուշադրությունը հրավիրել հետևյալ հարցերին.

1. Բալի կազմի մեջ մտնող n և p միացություններն են, որ օժտված են Ձեր կողմից ներկայացված հակաազդեգանտային հատկությամբ, և ինչ եք կարծում, արդյո՞ք ավելի նպատակահարմար չէր լինի առանձնացնել և կիրառել այն:
2. Կարելի՞ է ենթադրել, որ լիոֆիլիզացումը կարող է ազդել անտոցիանների քիմիական կազմի վրա:
3. Ինչու՞ է ընտրվել ներարկման ներորովայնային ձևը:
4. Ինչո՞վ է բացատրվում ուլտրաձայնի և 14000 պտույտի ժամանակ անտոցիանների քանակի բարձրացումը:
5. Ի՞նչ եք կարծում հետազայում որ դեղաձևի տեսքով հնարավոր կլինի կիրառել Բալենի սովորականի պտուղները:
6. Նկատվում են առանձին անհաջող արտահայտություններ, որոշ խմբագրական թերություններ և այլն:

Բերված հարցերը և դիտողությունները կրում են խորհրդատվական բնույթ և բոլորովին չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը:

Եզրակացություն: Հեղինակի կողմից կատարված աշխատանքը արդիական է, պարունակում է արժեքավոր եզրակացություններ, որոնք տալիս են աշխատանքին մեծ գիտագործնական նշանակություն: Ատենախոսությունն իրականացնելիս ատենախոսը ցուցաբերել է դիտարկվող հարցերի իմացություն, խնդիրները ձևակերպելու և լուծելու մասնագիտական պատրաստվածություն և վերլուծության բարձր մակարդակ: Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված աշխատանքները արտացոլում են ատենախոսությունում առկա հիմնական դրույթները: Ներկայացված ատենախոսությունում

գիտական դրույթները և եզրակացությունները, ինչպես նաև թեմայի հիմնավորումը քննարկված են բավարար աստիճանով: Հետազոտության արդյունքները հավաստի են, քանի որ դրանք հիմնված են ընդունված ժամանակակից մեթոդների կիրառմամբ հավաքագրված տվյալների վերլուծության վրա:

Քնարիկ Մկրտիչի Շամիլյանի՝ «Բալենի սովորականի պտուղների ազդեցությունը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների վրա» թեմայով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացված ատենախոսությունը ըստ իր արդիականության, հետազոտման մեթոդների մակարդակի, ստացված արդյունքների նորարարության, եզրահանգումների և գիտագործնական նշանակության համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԴ. 00.14-«Դեղաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Մեղմագրում ներկայացված նյութը լիովին համապատասխանում է ատենախոսությունում ներկայացված հետազոտության բովանդակությանը և նյութին:

Կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտատեխնիկական խորհրդի թ.23 նիստում առ 27.10.2025թ.:

Քննարկմանը մասնակցել են պ.գ.դ. Ս.Գասպարյանը, պ.գ.դ. Ա.Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պ.գ.դ., պրոֆ. Վ.Թովուզյանը, պ.գ.թ. Ռ.Հակոբյանը, պ.գ.թ. Շ.Դաշյանը, կ.գ.դ. Ռ.Պարոնիկյանը:

ՀՀ ԳԱԱ ՕՂՔԳՏԿ ՆՕՔԻ-ի Դեղաբանության և պարօնիստոլոգիայի
լաբորատորայի վարիչ, կ.գ. թ.

Հ.Գասպարյան

ՀՀ ԳԱԱ ՕՂՔԳՏԿ

գլխավոր տնօրեն, կ.գ. թ.

Լ.Ներսեյան

